



ԶԵԿՈՒՅՑ

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ,
ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ)
ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

ՄԱՍ 1



Յեղիևակներ՝ Սառա Ղազարյան
Մարիետա Թեմուրյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Յելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շնորհակալություն է հայտնում Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալությանը և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին՝ այս հրապարակումը հնարավոր դարձնելու համար: Չեկույցում ներկայացված տեսակետները և վերլուծությունները հեղիևակներին են և պարտադիր չէ, որ համընկնեն նշված կազմակերպությունների տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
Մեթոդաբանություն.....	6
1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....	8
1.1. Միջազգային մոտեցումները թմրամիջոցներից կախվածության խնդրին	8
1.2. Ոլորտային քաղաքականությունների մշակման միջազգային մոտեցումները	9
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
2.1. Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները.....	11
2.3. Ներպետական իրավական կարգավորումներում բացերն ու հակասությունները	15
3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	19
3.1. Ծրագրի պատասխանատուներն ու կատարողները	19
3.2. Միջոցառումների և արդյունքների ձևակերպումները տարեկան ծրագրերում ...	21
3.3. Ծրագրերի ֆինանսավորումը.....	22
3.4. Հաշվետվողականությունը	24
3.5. Տարեկան ծրագրերի իրականացման գնահատումը	25
3.5.1. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի կատարելագործումը և դրանց համապատասխանեցումը միջազգային պայմանագրերին.....	26
3.5.2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օպերատիվ կանխարգելիչ և հատուկ միջոցառումների անցկացում.....	28
3.5.3. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում	31
3.5.4. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ոլորտի ծառայողների մասնագիտական գիտելիքների կատարելագործում, միջազգային համագործակցության զարգացում	33
3.5.6. Անչափահասների և երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի միջոցառումներ.....	35
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	35
➤ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱԿ/ՁԻԱՅ	Մարդու իմունային անբավարարության վիրուս/Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
Ռազմավարություն	Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում թմրամիջոցների գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարին վերաբերող օրենսդրական կարգավորումները և ծրագրերը, ինչպես նաև ՀԲԱ Վանաձորի գրասենյակի՝ Չանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և թմրամիջոցներին առնչվող այլ հրապարակումների մշտադիտարկման արդյունքները¹ փաստում են, որ թմրամիջոցներից կախվածությունն ունեցող անձանց նկատմամբ քաղաքականությունը շարունակում է մնալ պատժողական:

2023 թ. մարտի 1-ին ՀՀ Ազգային ժողովում Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը տեղեկացրեց 2023 թ.-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարի հայտարարելու մասին²՝ հավելելով, որ մշակվել է նոր ռազմավարություն: Արձանագրենք, որ խնդրի մասին խոսում է միայն իրավապահ համակարգի ներկայացուցիչը և լսելի չէ առողջապահության և կրթության բնագավառների ձայնը: Ըստ այդմ, կարող ենք եզրակացնել, որ մոտեցումների փոփոխություն չի եղել:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պատժողական քաղաքականությունը ոչ միայն արդյունավետ չէ թմրամիջոցների ապօրինի շրջանառության և իրացման դեմ պայքարում, այլև բացասաբար է անդրադառնում հանրային առողջության վրա: Այն ունի բազմաթիվ բացասական հետևանքներ, ինչպիսիք են՝ քրեական արդարադատության համակարգի և դատարանների գերբեռնվածություն, քրեակատարողական հիմնարկների գերբնակեցում³: Ավելին, այն սրում է սոցիալական և առողջական խնդիրները: Դատապարտված անձը ենթարկվում է խարանի, մերժվում է հանրության կողմից, բախվում սոցիալական խնդիրների և չունենալով սոցիալական ու առողջապահական ծառայությունների հասանելիություն՝ զրկվում է փակ շրջանից դուրս գալու հնարավորությունից⁴:

¹ Տե՛ս Չանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և թմրամիջոցներին առնչվող այլ հրապարակումների մշտադիտարկման արդյունքները 2020-2022 թթ., Տեղեկանք, 2023 թ., ՀԲԱ Վանաձորի գրասենյակ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hcav.am/wp-content/uploads/2023/12/drug-users-media-2020-2022_27%E2%80%A411%E2%80%A42023.pdf

² Տե՛ս Ազգային ժողով - Կառավարություն հարցուպատասխան 01.03.2023 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.youtube.com/watch?v=heTbWpRtRoI>

³ Տե՛ս The unintended negative consequences of the 'war on drugs': mass criminalisation and punitive sentencing policies, Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2013/05/PRI_war-on-drugs-briefing_March-2013.pdf

⁴ Տե՛ս The cost and consequences of the war on drugs, զեկույց, էջ 53, Մարդու իրավունքների հիմնադրամ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://fileservr.idpc.net/library/the-cost-and-consequence.pdf>

Պատժողական մոտեցման անարդյունավետության մասին են փաստում նաև վիճակագրական տվյալները⁵:

Մասնագետներն ահազանգում են, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն աճում է շատ արագ տեմպերով, երիտասարդանում (14-16 տարեկան), գործածողների շրջանակն ընդլայնվում է՝ ընդգրկելով մեծ թվով բարձրագույն կրթություն ստացող և/կամ ունեցող անձանց, որոնց թիվը նախկինում մեծ չէր⁶: Ահազանգում է նաև Գյումրի համայնքի ավագանու անդամը՝ գրառում անելով առ այն, որ թմրամիջոցների շրջանառությունը հասել է հանրակրթական դպրոցներ⁷: Ավելացել է նաև թմրամիջոցներից կախվածություն ունեցող հաշվառված կանանց թիվը՝ 2022 թ. աճելով 40-ով (2021 թ.՝ 76 կին, 2022 թ.՝ 116 կին)⁸: Այսինքն, փոխվել է նաև սպառողի տարիքային և սեռային պատկերը:

Փոխվել են իրացման ճանապարհները՝ տեղափոխվելով իրավապահ համակարգի համար դժվար վերահսկելի տիրույթ: Խոսքը սոցիալական ցանցերի միջոցով թմրամիջոցների վաճառքի մասին է: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության գերակշռ մասը կատարվում է համացանցով, մասնավորապես՝ 98 տոկոսը կատարվում է Տելեգրամ սոցիալական ցանցի միջոցով⁹: Ըստ մասնագետների՝ ամեն օր սոցիալական հարթակում 100 հազարից ավելի մարդ թմրանյութ է փնտրում, երեկոյան ժամերին դեղատներից մեծ քանակությամբ ներարկիչների վաճառք է գրանցվում¹⁰: Ահազանգող վտանգի մասին են վկայում նաև փողոցներում նետված օգտագործած ներարկիչների քանակը:

⁵ Տե՛ս Թմրամիջոցների գործածման, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտի քաղաքականության գնահատում, Մաս 2, Չեկույց, 2023 թ., ՀԲԱ Վանաձորի գրասենյակ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hcav.am/drug-policy-part2-12-12-2023/>

⁶ Տե՛ս «Արմենիա» հեռուստատեսության «Սուր անկյուն», «Կանխելը՝ արդյունավետ միջոց», հաղորդում, 21.06.2022 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.facebook.com/watch/?v=441214054140345&ref=sharing>

⁷ Տե՛ս Գյումրի համայնքի ավագանու անդամ Նարեկ Միրզոյանի գրառումն առ 15.03.2023 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.facebook.com/arm.narek.mirzoyan/posts/pfbid02k4KD5hNT5XCVBedkksUT1NweijaS4FiNNiOLqz7bZ79rCu2XCQfw3mJvkqgicWqfl>

⁸ Տե՛ս Թմրանյութ օգտագործողը սկզբից հոգեպես է ոչնչանում, հետո ֆիզիկապես. Առողջապահության նախարարության խորհրդատու, ֆեյսբուքյան ասուլիս, 22.02.2023 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/32283553.html>

⁹ Տե՛ս ծանոթագրություն 8

¹⁰ Տե՛ս «Միասին կարող ենք» հասարակական կազմակերպություն, հարցազրույց, 26.01.2023 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.facebook.com/watch/?v=1225963414709349>

Հայաստանում հիմնականում սինթետիկ ծագման ժամանակակից թմրանյութերն են տարածված, որոնք, մասնագետների խոսքով, հոգեբանական կախվածությունն են առաջացնում¹¹:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել 2020 թ. 44 օրյա պատերազմի և դեռևս դրա չհաղթահարված հետևանքները և մասնակիցներին անհրաժեշտ ծավալի ու որակի հոգեբանական աջակցություն չապահովելու փաստը (մասնավորապես 2021 թ. մեկնարկած՝ պատերազմին մասնակցած անձանց և ընդհանուր առմամբ հանրության հոգեբանական վերականգնման 6 ամսյա ծրագրի շրջանակում աջակցություն ստացած անձանց թիվը կազմել է նվազագույն կարիքի ընդամենը 6.4 տոկոսը)¹²:

Սրանք մարտահրավերներ են, որոնք պետք է հաշվի առնվեն և թիրախավորվեն թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի և թմրամիջոց գործածող անձանց աջակցելուն ուղղված քաղաքականություններում:

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել մոտեցումները՝ ուղղված թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ու թմրամիջոցներից կախվածությունն ունեցող անձանց հետ աշխատանքներին՝ համապատասխանեցնելով դրանք արդի մարտահրավերներին, միջազգային լավագույն փորձին ու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի և թմրամիջոցներից կախվածությունն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի համատեքստում:

Ձեկույցը կազմված է երկու մասից: Առաջին մասում թմրամիջոցների բնագավառը կանոնակարգող իրավական դաշտի և իրականացվող միջոցառումների գնահատումն է: Առաջին մասում տարեկան ծրագրերը համեմատվել են՝ գնահատելու դրանց զարգացումը և

¹¹ Տե՛ս Կախվածությունների բուժման ազգային կենտրոն, հաղորդում, 2.03.2023 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.facebook.com/watch/?v=527429976203897>

¹² Առավել մանրամասն ՀՀ կառավարության հաստատած ծրագրի և դրա արդյունքների մասին տե՛ս ՀԶԱՎ տեղեկանքը Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի մասնակիցների և հանրության հոգեբանական վերականգնման աշխատանքների վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hcav.am/paterazm-hogebankan-verakangnman-tsragir/>

համապատասխանությունը տարեց տարի ի հայտ եկող նոր մարտահրավերներին:

Երկրորդ մասում ներկայացված է փաստացի իրավիճակն իրականացվող քաղաքականության համատեքստում. վեր են հանվել համապատասխան խնդիրներն ու մարտահրավերները, բացահայտվել, թե որքանով է քաղաքականությունն արդյունավետ և արդյոք պատշաճ են հաշվի առնվում մարտահրավերները:

Ուսումնասիրության ընթացքում գնահատվել է առկա մոտեցումների համապատասխանությունը մարդու իրավունքների պահպանման միջազգային չափանիշներին և լավագույն փորձին:

Ուսումնասիրության աղբյուրներն են՝

- միջազգային կոնվենցիաները
- թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային մեխանիզմները
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կարգավորող ներիրավական դաշտը
- Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2014-2022 թթ. միջոցառումների ծրագրերը
- Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2023 թ. միջոցառումների ծրագրի նախագիծը
- միջոցառումների ծրագրերի կատարման համար պատասխանատու գերատեսչությունների տրամադրած տեղեկությունները
- ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի տրամադրած տեղեկությունները և ներկայացուցիչների հարցազրույցները
- թմրամիջոց գործածող, քրեական և վարչական պատասխանատվության ենթարկված անձանց, թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների բացահայտման, չբացահայտման 2018-2022 թթ. վիճակագրական տվյալները
- թմրամիջոց գործածող անձանց հետ աշխատող հասարակական կազմակերպությունների զեկույցները, դրանց ներկայացուցիչների հարցազրույցները:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

1.1. Միջազգային մոտեցումները թմրամիջոցներից կախվածության խնդրին

Միջազգային լավագույն փորձը փաստում է թմրամիջոցների գործածման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականությունների արդյունավետությունը: Մասնավորապես միջազգային կառույցները և այդ կառույցների անդամ պետությունները թմրամիջոցներից կախվածությունը դիտարկում են որպես **առողջական խնդիր**:

Դեռևս 2007 թ. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունել է բանաձև թմրամիջոցների վերահսկման ոլորտում հանրային առողջության պահպանման քաղաքականությունը խթանելուն ուղղված եվրոպական կոնվենցիայի դրույթների վերաբերյալ: Կոնվենցիան, ի թիվս այլնի, պետք է նպատակ ունենար թմրամիջոցների գործածման խնդրի համատեքստում խթանելու առողջության իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք¹³: 2016 թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի՝ թմրամիջոցների համաշխարհային խնդրին նվիրված 30-րդ հատուկ նստաշրջանի ավարտին ՄԱԿ անդամ պետություններն ամրագրել են դրույթ, որով ճանաչում են թմրամիջոցներից կախվածությունը որպես բարդ, բազմազործոն **առողջական խնդիր**: Այն ունի քրոնիկ և կրկնվող բնույթ՝ սոցիալական պատճառներով և հետևանքներով, որոնք կարող են կանխարգելվել և բուժվել, ի թիվս այլնի, արդյունավետ գիտական ապացույցների վրա հիմնված թմրամիջոցների բուժման, ինչպես նաև խնամքի ու վերականգնողական՝ ներառյալ համայնքահենք ծրագրերի միջոցով¹⁴:

Թմրամիջոցներից կախվածությունը որպես առողջական խնդիր դիտարկելու մոտեցումն է ամրագրել նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Վերջինս մշակել է Թմրամիջոցներից կախվածության բուժման միջազգային չափանիշներ, որոնք վերանայվել ու վերահրապարակվել են 2020 թ. մարտի 31-ին¹⁵:

¹³ Տե՛ս Resolution 1576 (2007) For a European convention on promoting public health policy in drug control, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://pace.coe.int/pdf/8eb8c83cb738db6aee0f8f93aa2ece70399b32049e3cf69550c8a84337925fcd/r esolution%201576.pdf>

¹⁴ Տե՛ս Outcome Document of the 2016 United Nations General Assembly Special Session on the World Drug Problem New York, 19-21 April 2016, էջ 6, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.unodc.org/documents/postungass2016/outcome/V1603301-E.pdf>

¹⁵ Տե՛ս International Standards for the Treatment of Drug Use Disorders, Revised edition incorporating results of field-testing, 2020, հասանելի է հետևյալ հղմամբ՝

Ապացուցված է կապը թմրամիջոցների չարաշահման և աղքատության միջև: Մարդիկ, որոնք թմրամիջոցներից կախվածություն ունեն կամ մեղադրվում են թմրամիջոցների փոքրածավալ հանցագործությունների մեջ, հիմնականում պատկանում են խոցելի, աղքատ և սոցիալապես մեկուսացված խմբերին¹⁶: Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների չտարբերակված քրեականացումը նպաստել է մարզինալացմանը, խտրականությանը, ՄԻԱԿ/ՁԻԱՅ-ի և արյան միջոցով փոխանցվող այլ հիվանդությունների տարածմանը¹⁷:

Բազմաթիվ հետազոտություններ ապացուցել են պատերազմի մասնակիցների մոտ ալկոհոլային և/կամ թմրամիջոցներից կախվածության առաջացման բարձր ռիսկը: Բազմաթիվ են նաև հետազոտությունները, որոնք ապացուցում են հետտրավմատիկ սթրեսային խանգարման և թմրամիջոցների չարաշահման կապը¹⁸:

1.2. Ոլորտային քաղաքականությունների մշակման միջազգային մոտեցումները

Որպես կանոն թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կարգավորվում է ռազմավարություններով, որոնք մշակվում են որոշակի ժամկետով¹⁹:

Ռազմավարության մշակումը որոշակի ժամանակահատվածի համար հիմնավորվում է անընդհատ փոփոխվող քաղաքական և սոցիալական միջավայրով: Ինչպես նշում է Թմրամիջոցների և թմրամիջոցներից կախվածության մոնիթորինգի եվրոպական կենտրոնը, թմրամիջոցների

<https://www.who.int/publications/i/item/international-standards-for-the-treatment-of-drug-use-disorders>

¹⁶ Տե՛ս The unintended negative consequences of the ‘war on drugs’: mass criminalisation and punitive sentencing policies, էջ 1, Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2013/05/PRI_war-on-drugs-briefing_March-2013.pdf

¹⁷ Տե՛ս The unintended negative consequences of the ‘war on drugs’: mass criminalisation and punitive sentencing policies, էջ 1, Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2013/05/PRI_war-on-drugs-briefing_March-2013.pdf

¹⁸ Տե՛ս A brief history of war and drugs: From Vikings to Nazis, Պատերազմի և թմրանյութերի համառոտ պատմություն. վիկինգներից մինչև նացիստներ, հոդված, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.aljazeera.com/features/2016/11/25/a-brief-history-of-war-and-drugs-from-vikings-to-nazis>

¹⁹ Տե՛ս New developments in national drug strategies in Europe (Եվրոպայում թմրամիջոցների ազգային ռազմավարությունների նոր զարգացումները), European Monitoring Centre for Drugs and Drug Addiction, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.emcdda.europa.eu/system/files/publications/6402/20175662_TDAU17002ENN_PDF.pdf

ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարությունը կապված է քաղաքական և սոցիալական համատեքստի հետ, որը մշտապես փոփոխվում է: Դա են փաստում եվրոպական երկրների կառավարությունների կողմից կարճաժամկետ և հիմնախնդիրներին վերաբերող գործողությունների ծրագրերի կիրառումը՝ թիրախավորելով հրատապ խնդիրները և ապահովելով թմրամիջոցներին վերաբերող քաղաքականության տեսլականը, սկզբունքներն ու նպատակները ներառող ավելի երկարաժամկետ ռազմավարական փաստաթղթերի արդիականությունը²⁰:

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում թմրամիջոցների ոլորտը կարգավորող փաստաթղթերում համակարգողի դերակատարությունը վերապահվում է կա՛մ **առողջապահության նախարարությանը** (օր.՝ Բուլղարիա, Լեհաստան, Պորտուգալիա, Վրաստան), կա՛մ **սոցիալական հարցերի նախարարությանը** (օր.՝ Էստոնիա, Զուլնգարիա, Ֆինլանդիա), կա՛մ **վարչապետի գրասենյակին** (օր.՝ Ֆրանսիա, Զուլնաստան, Իտալիա)²¹:

ԵՄ անդամ պետություններում թմրամիջոցների ոլորտում քաղաքականությունների համակարգումն իրականացվում է ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում²²:

Ռազմավարությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք խարսխվում են երկու հիմնարար ուղղությունների վրա՝ **առաջարկի և պահանջարկի կրճատում**²³:

Թմրամիջոցների առաջարկի կրճատումը ներառում է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների, մասնավորապես **կազմակերպված հանցագործությունների** կանխարգելումը, կանխումը և խափանումը: Թմրամիջոցների պահանջարկի կրճատումը բաղկացած է մի շարք հավասարապես կարևոր և փոխլրացնող միջոցառումներից, ներառյալ կանխարգելումը, վաղ հայտնաբերումը և միջամտությունը, խորհրդատվությունը, բուժումը, վերականգնումը և սոցիալական վերաինտեգրումը²⁴: Անշուշտ, այս երկու թիրախներից բխող գործողությունները և միջոցառումները մշակվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի

²⁰ Տե՛ս ծանոթագրություն 18

²¹ Տե՛ս ծանոթագրություն 19

²² Տե՛ս ծանոթագրություն 19, էջ 11

²³ Տե՛ս, օրինակ, ԵՄ թմրամիջոցների վերաբերյալ ռազմավարությունները՝ 2013-2020 թթ., 2021-2025 թթ., հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://www.consilium.europa.eu/media/49194/eu-drugs-strategy-booklet.pdf>, ԵՄ թմրամիջոցների վերաբերյալ ռազմավարությունը՝ 2021-2025 թթ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.consilium.europa.eu/media/49194/eu-drugs-strategy-booklet.pdf>

²⁴ Տե՛ս ծանոթագրություն 19

քաղաքական և սոցիալական համատեքստը, մշակութային առանձնահատկությունները, ավանդույթները և այլն:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ռազմավարությունները խարսխվում են 4 հիմնական սյուների վրա՝ կանխարգելում, աջակցություն կախվածությունը հաղթահարելու հարցում (խորհրդատվություն, բուժում, խնամք, վերասոցիալականացում), վնասի նվազեցում և առաջարկի կրճատում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

Թմրամիջոցներին և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին վերաբերող հիմնական միջազգային փաստաթղթերն են Թմրամիջոցների մասին միասնական²⁵, Հոգեմետ նյութերի մասին²⁶, Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին²⁷ և Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ²⁸ ՄԱԿ կոնվենցիաները: Հայաստանը միացել է վերոնշյալ կոնվենցիաներին՝ ստանձնելով միջազգային պարտավորություններ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրականացման հարցում:

1971 թ. հիմնադրվել է Թմրամիջոցների և կախվածությունների միջազգային համագործակցության խումբը (Պոմպիդու խումբ), որը մարդու իրավունքները հռչակել է թմրամիջոցներին վերաբերող քաղաքականությունների հիմնաքար²⁹: Հայաստանը, 2020 թ.-ին

²⁵ Տե՛ս Թմրամիջոցների մասին միասնական կոնվենցիան, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76214>

²⁶ Տե՛ս Հոգեմետ նյութերի մասին կոնվենցիան, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80561>


²⁷ Տե՛ս Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին կոնվենցիան, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80574>

²⁸ Տե՛ս Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75872>

²⁹ Տե՛ս Պոմպիդու խմբի առաքելությունը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.coe.int/en/web/pompidou/about/pompidou-group-introduction> և Թմրամիջոցների չարաշահման և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի համագործակցության խմբի նախարարական 17-րդ համաժողովին (Պոմպիդու խումբ)

անդամակցելով Պոմպիդու խմբին, ստանձնել է մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականություն իրականացնելու պարտավորություն³⁰:

Թմրամիջոցների չարաշահման կանխարգելումը և բուժումը, այդ թվում՝ թմրադեղերի չարաշահումը և ոգելից խմիչքների վնասաբեր օգտագործումը ներառված է նաև Կայուն զարգացման նպատակներում (ԿՉՆ), մասնավորապես «Առողջություն և բարեկեցություն» նպատակի ներքո³¹: 3.5.1 ցուցանիշը վերաբերում է թմրամիջոցների գործածման հետևանքով առաջացած խանգարումների բուժման միջամտություններին (դեղորայքային բուժում, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական և հետբուժական խնամքի ծառայություններ): Այնուամենայնիվ, 2023 թ. հունվարի դրությամբ կայքում բացակայում էին ազգային որևէ մեթատվյալներ այդ ցուցանիշի վերաբերյալ (տե՛ս Նկար 2), ինչը կարող է նշանակել, որ որևէ աշխատանք այս ուղղությամբ չի կատարվում:



Նկար 1.

ընդունված Սթավանգերի հռչակագիրը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=0900001680902fdd

³⁰ Պոմպիդու խմբին անդամակցելու հարցը ներառված էր ՀՀ կառավարության 2019 թ. դեկտեմբերի 26-ի նիստի օրակարգում, իսկ Պոմպիդու խմբի պաշտոնական կայքէջում Հայաստանի անդամակցության տարեթիվը 2020 թ. է: ՀՀ արտաքին գործերի նախարարության 2020-2022 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020 թ. բյուջետային ֆինանսավորման հայտում նշված է, որ «2018 թվականին Հայաստանը անդամակցել է Եվրոպայի խորհրդի Թմրանյութերի չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի համագործակցության խմբին (Պոմպիդու խումբ), որին անդամավճարը կազմում է տարեկան 3472 եվրո»: Ըստ այդմ, անհասկանալի է, թե ինչպես է Հայաստանն անդամակցել խմբին 2018 թ.-ին և ինչու է 2018-2019 թթ. համար վճարվել անդամավճար

³¹ Տե՛ս Կայուն զարգացման նպատակների կայքէջը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://sdg.armstat.am/am/3-5-1/>

2.2. Ներպետական իրավական կարգավորումները

2002 թ. դեկտեմբերի 26-ին ընդունվեց «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքը³², որով ամրագրվեց «թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի աշխատանքների իրականացման տարեկան ծրագրերի» պահանջը (հոդված 52): Ծրագրերը մշակում է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովը (ստեղծվել է ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 27-ի N 1714-Ն որոշմամբ³³) և հաստատում Կառավարությունը:

2014 թ. դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-226-Ն կարգադրությամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը (Ռազմավարություն)³⁴:

Հայաստանում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հիմնական ուղղություններն ամրագրվում են տարեկան ծրագրերով: Հատկանշական է, որ թեև տարեկան ծրագրերի պահանջը սահմանվել է 2002 թ. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքով³⁵, առաջին տարեկան ծրագիրը հրապարակվել է 2014 թ.³⁶: Բացի դրանից՝ թեև օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված է, որ

³² Տե՛ս ՀՀ օրենքը «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին», ընդունված 2002 թ. դեկտեմբերի 26-ին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120914>

³³ Տե՛ս հանձնաժողովը ստեղծելու մասին որոշումը հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107391>, հանձնաժողովի աշխատակարգը հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=12503>

³⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95253>

³⁵ Տե՛ս «2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը հաստատելու մասին» կարգադրությունը, 25.09.2009 թ., ՆԿ-162-Ն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56231>

³⁶ Տե՛ս 2014 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85847>

2015 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93158>,

2016 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100861>

2017 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108506>,

2018 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116217>,

2019 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125619>,

տարեկան ծրագիրը, ի թիվս այլնի, ներառում է վերլուծություն (տեղեկանք) հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության (այդ թվում՝ քողարկվածության վիճակի), ինչպես նաև բնակչության շրջանում թմրամոլության տարածման քանակական ու որակական բնութագրի և թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցավորության կառուցվածքի և շարժի մասին³⁷, նման տեղեկություն առաջին անգամ ներառվել է 2020 թ. տարեկան ծրագրում:

2014, 2015 թթ. ծրագրերը հաստատվել են Կառավարության որոշմամբ, այնուհետև 2016 և 2017 թթ.՝ արձանագրային որոշմամբ, իսկ 2018-ից հետո՝ կրկին Կառավարության որոշմամբ: Մինչև 2018 թ. օրենսդրությունը հնարավորություն էր տալիս Կառավարությանն ընդունել արձանագրային որոշումներ օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում չպահանջող հարցերի դեպքում, որոնք ենթակա չեն համաձայնեցման, եթե այլ բան չի բխում նշված փաստաթղթերի հիմք հանդիսացող հանձնարարականներից³⁸: «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018 թ. մարտի 23-ի ՀՀ օրենքով արձանագրային որոշումը որպես Կառավարության որոշման առանձին տեսակ դադարեց գոյություն ունենալ³⁹: Ներպետական պրակտիկայում տարածված էր այն մոտեցումը, որ ոլորտային ռազմավարությունները, ծրագրերը կամ ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրերը և ժամանակացույցերը պետք է հաստատվեն արձանագրային որոշման տեսքով: Նման մոտեցումը բավականին խնդրահարույց էր, քանի որ այնպիսի առանցքային նշանակություն ունեցող ծրագրերը, ինչպիսին, օրինակ, Հայաստանում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ծրագիրն է, իրավական համակարգում ուրույն տեղ են զբաղեցնում թե՛ միասնական պետական քաղաքականության ձևավորման, թե՛ օրենսդրական համակարգային խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Հետևաբար, նմանատիպ ծրագրերը և ռազմավարությունները, որոնք ուղղված էին օրենսդրությունում փոփոխությունների և լրացումների կատարմանը կամ արմատավորված

2020 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134733>,

2021 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146409>

³⁷ Տե՛ս 2020 թ. ծրագիր և ժամանակացույց, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134733>

³⁸ Տե՛ս «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիրը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=109178>

³⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120733>

պրակտիկայի փոփոխմանը, չպետք է հաստատվեին արձանագրային որոշման ձևով:

Ոլորտին վերաբերող հիմնական իրավական փաստաթղթերն են նաև ՀՀ քրեական օրենսգիրքը⁴⁰, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը⁴¹, «ՀՀ-ում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը⁴² և «Թմրամոլների նկատմամբ բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը⁴³:

2.3. Ներպետական իրավական կարգավորումներում բացերն ու հակասությունները

Բացթողումներ են արձանագրվել «Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 27-ի N 1714-Ն որոշման մեջ: Մասնավորապես միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ընդգրկված են գոյություն չունեցող գերատեսչությունների ներկայացուցիչներ⁴⁴: Ըստ այդմ, անհասկանալի է, թե ով, ում և ինչի համար է հաշվետու:

Բացի դրանից՝ Եվրամիության և միջազգային այլ կառույցների կողմից հարևան երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող Եվրոպական հարևանության և համագործակցության ծրագրի շրջանակներում (կետ 2-ի 2-րդ պարբերություն) մշակվել և 2009 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ նախագահի կարգադրությամբ հաստատվել է **2009-2012 թթ. ընթացքում** Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և

⁴⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=178683>

⁴¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=179295>

⁴² Տե՛ս «ՀՀ-ում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» կառավարության որոշումը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=164463>

⁴³ Տե՛ս «Թմրամոլների նկատմամբ բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշումը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=41779>

⁴⁴ Տե՛ս որոշման կետ 1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107391>

թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը⁴⁵: Կարգադրությամբ ՀՀ կառավարությունը լիազորվում էր ապահովել 2009-2012 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցի մշակումը, հաստատումը և իրականացումը: Մինչդեռ ՀՀ նախագահի կարգադրության ուժի մեջ մտնելուց 10 ամիս անց՝ 2010 թ. հուլիսի 15-ին է ՀՀ կառավարությունը հաստատել միջոցառումների ժամանակացույց⁴⁶ 2010-2012 թթ. համար:

2014 թ. Ռազմավարության մեջ ևս անկա են բացեր և անհամապատասխանություններ: Առաջինը՝ Ռազմավարությունը չունի ժամկետներ, որևէ իրավական ակտով այն ուժը կորցրած չի ճանաչվել, այսինքն գործող իրավական փաստաթուղթ է: Մինչդեռ Ռազմավարությունը հաստատելուց հետո փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության կառուցվածքում, որոնք որևէ կերպ չեն արտացոլվել Ռազմավարության հաստատման կարգադրությունում:

Այսպես, Ռազմավարությամբ սահմանված պայքարի մասնակիցների ցանկում նշված են նախարարություններ (ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն), որոնք «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով 2019 թ.-ից ՀՀ կառավարության կազմում չկան⁴⁷: Նշված են նաև մարմիններ, որոնց ենթակայությունը փոխվել է⁴⁸ (2018 թ.-ից «Ազգային անվտանգության ծառայությունը վարչապետին ենթակա մարմին է»⁴⁹):

Այսպիսով, նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինները դրսևորել են անգործություն և համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման հարցում: Արդյունքում, անհասկանալի է, թե որն է այն իրավական հենքը, որի վրա խարխսվում է թմրամիջոցների ոլորտում Հայաստանի քաղաքականությունը: Արդյոք 2014 թ. ռազմավարությունը կարելի է համարել իրավական ուժ ունեցող: Եթե այո՝ ինչու համապատասխան փոփոխություններ չեն կատարվում իրավական ակտում, եթե ոչ՝ ինչու այն ուժը կորցրած իրավական ակտ չի ընդունվում:

⁴⁵ Տե՛ս ծանոթագրություն 35

⁴⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 892-Ն առ 15 հուլիսի 2010 թ.՝ 2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=69233>

⁴⁷ Տե՛ս ՀՀ օրենքը «Կառավարության կազմի և գործունեության մասին», հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=159053>

⁴⁸ Տե՛ս ծանոթագրություն 34, հոդված 48

⁴⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Ազգային անվտանգության մարմինների մասին», հոդված 3, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=121902>

Վրիպարկներով, ոչ ճշգրիտ և հակասական տվյալներով լի են նաև տարեկան ծրագրերը: Ստորև ներկայացնում ենք մի քանի օրինակ.

1. 2019 թ. տարեկան ծրագրում 18-րդ միջոցառման ենթակետերն են 19.1 և 19.2⁵⁰ (տե՛ս Նկար 2)

18.	19.1	Ֆիզիկական	Բնակչույթ
voroshumNrk215.2			

պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում	19.2	Ֆիզիկական	կազմակերպական կենսակերպի հանրային բնակչույթ սպորտի ներդրում
---	------	-----------	---

Նկար 2.

2. համաձայն 2020 թ. տարեկան ծրագրի՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայատման 2018 թ. ցուցանիշը 58 տոկոս է⁵¹, մինչդեռ 2021 թ. տարեկան ծրագրում նույն ցուցանիշը արդեն 61 տոկոս է⁵² (տե՛ս Նկար 3)

10. 2018թ. ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից յայտնաբերվել են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 877 յեպք. նախորդ տարվա 1271-ի դիմաց: Գրանցվել է նվազում 384 դեպքով կամ 30,21%-ով: Բացահայտման տոկոսը կազմել է 58% (2017թ.՝ 61%):

10. 2019 թ. ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 1088 դեպք. նախորդ տարվա 877-ի դիմաց: Գրանցվել է ան 211 դեպքով կամ 24%-ով: Բացահայտման տոկոսը կազմել է 54% (2018 թ.՝ 61%):

Նկար 3.

⁵⁰ Տե՛ս ՀՀ կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի N 1017-L որոշում, Հավելված 2, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125619>

⁵¹ Տե՛ս 2019 թ. ծրագիրը և ժամանակացույցը, Հավելված N 1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134733>

⁵² Տե՛ս 2020 թ. ծրագիրը և ժամանակացույցը՝ հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134733>

3. 2022 թ. ծրագրում պատասխանատվության ենթարկված անձանց սխեմատիկ պատկերը արտացոլող աղյուսակում թվերի հանրագումարը չի համընկնում ընդհանուր անձանց թվի հետ, տոկոսային տվյալները և բացարձակ թվերը աղավաղված են ներկայացված: Մասնավորապես՝ տոկոսային հարաբերակցությունը գրված է անձանց թվի համար նախատեսված սյունակում կամ անձանց թվի և տոկոսային հարաբերակցության համար սյունակում նույն թվերն են լրացված⁵³ (տե՛ս Նկար 4)

15. 2019-2020 թթ. թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներզոհող) նյութերի և դրանց արեւուրտների ապօրէ շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության ենթարկված անձանց սխեմատիկ պատկերը հետևյալն է.

		2019 թ.		2020 թ.	
		անձ	տոկոս	անձ	տոկոս
Ընդամենը		510	X	490	X
Այդ թվում՝	կին	30	5,8	21	4,2
	Օտարերկրացի	46	9	23	4,7
	Նախկինում դատապարտված	10	1,9	6	1,2
	Անչափահաս	10	1,9	4	0,8
18-ից 24 տարեկան		45	8,8	40	8,1
25-ից 29 տարեկան		65	12,7	65	13,3
30-ից 49 տարեկան		52,7	240	49	49
49-ից բարձր		23,7	141	28,8	28,8

Նկար 4.

4. 2021 թ. տարեկան ծրագրի 20-րդ միջոցառման երկու կատարող անհասկանալի պատճառով փակագծում են ներառված⁵⁴ (տե՛ս Նկար 5)

20	Ըստ բնակության վայրերի պարզ տիպի խաղաղապարակների ստեղծում	Համայնքների քակերում և հանգստի գոտիներում (գրոսազինեղ, պուրակներ) խաղաղապարակների ստեղծում՝ հազեցած պարզ տիպի մարգասարքերով (պտտածողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մազլցման և ձգումների համակցված հարմարանքներ ու սարքեր և այլն)	կազմակերպություններ (համաձայնությամբ) «Վ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների մատչելիություն» (Երևանի քաղաքապետարան, «Վ մարզպետարաններ, ամայնքապետարաններ)	թվ ընկ
----	---	---	--	-----------

Հայաստանի Հանրապետության
Ճանաչողական կենտրոն


Նկար 5.

Բացի ծրագրում արձանագրված հակասություններից և ոչ ճշգրիտ տեղեկություններից, կազմակերպության հարցումներին պատասխանները նույնպես ոչ ամբողջական են: Հիմնականում ընդհանրական տեղեկություն են ներկայացնում, թե ում հետ են կազմակերպվել հանդիպումներ և քննարկումներ և ոչ թե կարիքի ու իրականացված գործողությունների արդյունքների և/կամ ազդեցության մասին: Որոշ գերատեսչությունների տրամադրած տեղեկության

⁵³ Տե՛ս 2022 թ. ծրագիրը և ժամանակացույցը՝ հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=156445>

⁵⁴ Տե՛ս 2021 թ. ծրագիրը և ժամանակացույցը՝ հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docID=146409>

թվային տվյալները չեն համապատասխանում միմյանց կամ թերի են (տե՛ս Ակար 7)



Ակար 6.

Նման մոտեցումը թույլ է տալիս արձանագրել պատասխանատուների անփուլթ և ոչ պատշաճ վերաբերմունքը ոլորտին, որը տարեց տարի ակնհայտ դրսևորվում է նշյալ ծրագրերում: Սա, ի թիվս այլնի, ծրագրերի ոչ արդյունավետ կատարման հիմնական պատճառներից կարող է լինել:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՋԱՏՈՒՄԸ

3.1. Ծրագրի պատասխանատուներն ու կատարողները

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի և թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ քաղաքականությունը պահանջում է բազմազերատեսչական համագործակցություն:

Թմրամիջոցների ոլորտին վերաբերող տարեկան ծրագրերում կատարողների թվում են ՀՀ արդարադատության, պաշտպանության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, պետական եկամուտների կոմիտեն, ազգային անվտանգության ծառայությունը, ինչպես նաև համաձայնությամբ ՀՀ մարզպետարանները, համայնքապետարանները, Երևանի քաղաքապետարանը, զանգվածային լրատվության միջոցները, մարզական հասարակական կազմակերպությունները (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջոցառումների ծրագրերի պատասխանատուները	
Պատասխանատու գերատեսչությունը	Միջոցառումների թիվը
ՀՀ ոստիկանություն	14
ՀՀ առողջապահության նախարարություն	10
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	10
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	8
Երևանի քաղաքապետարան	6 (որից համաձայնությամբ՝ 4)
ՀՀ արդարադատության նախարարություն	4
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	4
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	3
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2

Խնդրահարույց է միջոցառումների բաշխվածությունը: Ծրագրի համակարգողն ու հիմնական կատարողը **ՀՀ ոստիկանությունն է: Այս կառույցը 12 միջոցառումների (այն է՝ միջոցառումների 60 տոկոսի) առաջին կատարող է, մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարությունը՝ միայն մեկի:** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ընդամենը երեք միջոցառման կատարող է: Ընդ որում որոշ միջոցառումների վերաբերյալ գերատեսչությունը կազմակերպությանը տեղեկություններ է տրամադրել մինչև 2018 թ.-ը, իսկ դրանից հետո պատասխանել է, որ **դրանք իր իրավասությունից դուրս են:** Մտահոգիչ է նաև տարածքային կառավարման և ինքնակառավարման մարմինների ներգրավվածության ցածր մակարդակը:

Կարող ենք եզրակացնել, որ տարեկան ծրագրերում կենտրոնական դերակատարությունը վերապահված է ՀՀ ոստիկանությանը, ինչը փաստում է, որ առաջնահերթությունը տրվում է պատժողական քաղաքականությանը:

Մինչդեռ թմրամիջոցներից կախվածությունն ունեցող անձանց բուժման և վերասոցիալականացման բաղադրիչներն անտեսված են:

Հատկանշական է, որ 2010-2012 թթ. ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով ՀՀ առողջապահության նախարարությունը միջոցառումների 45%-ի կատարման առաջին պատասխանատուն էր (87 միջոցառումից 39 միջոցառում), և միջոցառումների 51%-ի (45 միջոցառում)՝ համակատարող: ՀՀ ոստիկանությունը 17%-ի առաջին պատասխանատուն էր (15 միջոցառում)⁵⁵: Այսինքն, 2010-2012 թթ. ազգային ծրագրում խնդրի առողջապահական համատեքստին ավելի մեծ առաջնահերթություն էր տրվել, ինչը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ ծրագիրը կազմվել է Եվրամիության և միջազգային այլ կառույցների կողմից հարևան երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող Եվրոպական հարևանության և համագործակցության ծրագրի շրջանակներում:

Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակվող քաղաքականություններում ապահովել պարտականությունների համաչափ բաշխվածություն գերատեսչությունների միջև: Անհրաժեշտ է վերանայել թմրամիջոցների ոլորտի առաջնահերթությունները՝ համապատասխանեցնելով դրանք մարդու իրավունքների վրա հիմնված արդի միջազգային չափանիշներին և մոտեցումներին, և իրականացնել հանրային առողջության պահպանմանն ուղղված քաղաքականություն:

3.2. Միջոցառումների և արդյունքների ձևակերպումները տարեկան ծրագրերում

Տարեկան ծրագրերի հիմնական թերություններից է միջոցառումների հիմնավորումների բացակայությունը: Միջոցառումներն ամեն տարի մինևույն, ոչ հստակ ձևակերպմամբ փոխանցվում են հաջորդ տարվա ծրագիր: Միջոցառումների և առկա մարտահրավերների ու նպատակների միջև հստակ կապի բացակայությունը խոչընդոտում է նաև ծրագրի արդյունավետության գնահատմանը:

⁵⁵ 2010-2012 թթ. ազգային ծրագրի կատարողականի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս «2010-2012 թթ. ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի» վերլուծությունը թմրամիջոցներից կախվածությունն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից գեկույցում, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2014 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://archive.hcav.am/wp-content/uploads/2014/11/ազգային-ծրագրի-վերլուծություն.pdf>

Այսպես, 2.5 միջոցառման առաջին մասով նախատեսված է «Կատարելագործել ՀՀ սահմանային անցակետերում և մաքսային հսկողության գոտիներում հսկողության ապահովումը, իսկ երկրորդ մասով՝ ընդլայնել ու հզորացնել ՀՀ ոստիկանության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կինոլոգիական կենտրոնների նյութատեխնիկական բազան»։ Սույն միջոցառումը նախատեսվում է 2014 թ.-ից, այնուամենայնիվ չկա որևէ հստակություն, թե, օրինակ, ՀՀ սահմանային անցակետերից և մաքսային հսկողության գոտիներից մասնավորապես որոնցում պետք է նախատեսվող տարում կատարելագործվի հսկողությունը, կինոլոգիական որ կենտրոնների նյութատեխնիկական բազան պետք է ընդլայնվի ու հզորացվի:

Միջոցառումների ակնկալվող արդյունքներն ավելի շատ ձևակերպված են որպես ակնկալվող ազդեցություն և, որպես կանոն, չափելի չեն: Օրինակ՝

- 1.2 միջոցառման ակնկալվող արդյունքը ձևակերպված է որպես «Հնարավորություն կտա ներկայացնել հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ իրականացված աշխատանքները միջազգային հանդիպումներում»։ Անհասկանալի է, թե ինչպես չափել հնարավորությունը, ինչ ձևաչափով միջազգային հանդիպումներ են նախատեսվում, ովքեր են այս միջոցառման հասցեատերերը:
- 1.3 միջոցառման ակնկալվող արդյունքը ձևակերպված է որպես «Կնվազեցնի թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը»։ Անհասկանալի է, թե, օրինակ, որքանով պետք է նվազեցվի:

Նման ձևակերպումներով են տարեկան ծրագրերի բոլոր միջոցառումները և դրանց ակնկալվող արդյունքները, մինչդեռ որքան հստակ են ձևակերպված միջոցառումները, արդյունքային ցուցանիշներն ու ակնկալվող ազդեցությունը, այնքան աշխատանքը դրանց կատարման ուղղությամբ արդյունավետ է:

Ըստ այդմ, անհրաժեշտ է վերաձևակերպել բոլոր միջոցառումները՝ ապահովելով հստակություն և որոշակիություն, ինչպես նաև սահմանել չափելի ակնկալվող արդյունքներ և ակնկալվող ազդեցություն:

3.3. Ծրագրերի ֆինանսավորումը

Համաձայն տարեկան ծրագրերի՝ միջոցառումների ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան պետական մարմնին տվյալ տարվա համար հատկացված գումարներ.


2) միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տեխնիկական և խորհրդատվական գծով դոնոր-պետությունների միջոցներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ:

Թեև միջոցառումների կատարման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշվում է նաև ՀՀ պետական բյուջեն, բյուջեից հատկացումների չափի վերաբերյալ կազմակերպությանը տեղեկություններ չեն տրամադրվել:

Համեմատելով 2016-2022 թթ. տարեկան ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները՝ կարող ենք փաստել, որ պետական բյուջեից հատկացումներ 2022 թ.-ի համար առհասարակ չեն նախատեսվել, թեև այն որպես ֆինանսավորման աղբյուր նշված է տարեկան ծրագրի նկարագրական մասում⁵⁶: Միջոցառումների ցանկում 2016 թ.-ից առ 2021 թ. ֆինանսավորման աղբյուրների ձևակերպումներն էին «**ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ**» և «**Ֆինանսավորում չի պահանջվում**»: 2022 թ. տարեկան ծրագրում ֆինանսավորման աղբյուրներում բացակայում է **ՀՀ պետական բյուջեն** և նշված են միայն «**ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ**» և «**Ֆինանսավորում չի պահանջվում**» (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1: Միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները



Բացի այն, որ պետական բյուջեից միջոցներ չեն նախատեսվում, ըստ ՀՀ ոստիկանության՝ կառույցը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և

⁵⁶ Տե՛ս ծանոթագրություն 53

բյուջեի նախագծով 2018-2020 թթ. ներկայացրել է ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան միջոցառումների ծրագրի իրականացման շուրջ 80.0 մլն. դրամի պահանջարկ, սակայն լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

Ֆինանսական ռեսուրսներ չհատկացնելը ևս փաստում է ոլորտին անհրաժեշտ կարևորություն չտալու մասին:

Կարող ենք եզրահանգել, որ պատասխանատու գերատեսչությունների կողմից միջոցառումներն իրենց ընթացիկ ֆինանսական ռեսուրսների շրջանակում կատարելը նույնպես միջոցառումների ոչ պատշաճ իրականացման և արդյունավետության բացակայության պատճառներից է:

Ըստ այդմ, նախատեսված միջոցառումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է երաշխավորել պետական բյուջեից ֆինանսական կայուն և կանխատեսելի հատկացումներ:

3.4. Հաշվետվողականությունը

Ոլորտին վերաբերող ծրագրի կատարողականի մասին հաշվետվությունների հասանելիությունն ու մատչելիությունը հանրային իրազեկության և ծրագրերի արդյունավետ իրականացման կարևոր երաշխիքներից են: Ավելին, հանրության իրազեկության բարձրացումը սահմանված է որպես տարեկան ծրագրերի հիմնական ուղղություն և խնդիր, որի գործիքներից մեկը հաշվետվություններն են:

Համաձայն «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի՝ տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հերթական տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մասն է⁵⁷: Հաշվետվությունների ներկայացման նման ձևաչափը խնդրահարույց է հաշվետվողականության և աշխատանքների թափանցիկության ապահովման տեսանկյունից, քանի որ համապարփակ տեղեկություն կատարված աշխատանքների վերաբերյալ չի ներառում, ինչպես նաև անմատչելի և դժվար հասանելի է հանրության համար:

Խնդրահարույց է նաև գերատեսչությունների մոտեցումը տեղեկության տրամադրմանը: Կազմակերպության հարցումներին ի պատասխան տրամադրվել են ոչ ճշգրիտ թվային տվյալներ, թերի տեղեկություն (ոչ բոլոր միջոցառումների վերաբերյալ են պատասխանել): Որոշ գերատեսչություններ

⁵⁷ Տե՛ս ծանոթագրություն 32, հոդված 54

առհասարակ չեն պատասխանել հարցումներին, մյուսները պատասխանել են, որ միջոցառումն իրենց իրավասությունից դուրս է, թեև տարեկան ծրագրում նշված են որպես տվյալ միջոցառման կատարող: Նման մոտեցումը, հաշվի առնելով նաև հաշվետվությունների անմատչելի մեխանիզմը, մտահոգիչ է պատկան մարմինների հաշվետվողականության և թափանցիկության տեսանկյունից:

Ըստ այդմ, անհրաժեշտ է երաշխավորել ոլորտին վերաբերող քաղաքականությունների իրականացման թափանցիկությունն ու պատասխանատուների հաշվետվողականությունը հանրության առջև:

3.5. Տարեկան ծրագրերի իրականացման գնահատումը

Տարեկան ծրագրերի միջոցառումները բաշխված են 6 բաժինների ներքո.

1. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի կատարելագործումը և դրանց համապատասխանեցումը միջազգային պայմանագրերին
2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օպերատիվ կանխարգելիչ և հատուկ միջոցառումների անցկացում
3. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում
4. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ոլորտի ծառայողների մասնագիտական գիտելիքների կատարելագործում, միջազգային համագործակցության զարգացում
5. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց վերականգնողական միջոցառումներ
6. Անչափահասների և երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի միջոցառումներ

3.5.1. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի կատարելագործումը և դրանց համապատասխանեցումը միջազգային պայմանագրերին

Ըստ կատարող գերատեսչությունների՝ 2016-2021 թթ. ընթացքում որոշ իրավական ակտերում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, մշակվել են առաջարկություններ համապատասխան փոփոխությունների համար: 2010 թ.-ից ՀՀ կառավարության կողմից հաստատվող բոլոր տարեկան ծրագրերը ներառում են միջոցառում, որով Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող ՀՀ ներպետական իրավական ակտերը պետք է համապատասխանեցվեն ՄԱԿ-ի կոնվենցիաների և միջազգային փաստաթղթերի դրույթներին:

Այնուամենայնիվ, թմրամիջոց գործածող անձանց իրավունքների ապահովման բարելավմանն ուղղված իրավական կարգավորումներ այդպես էլ չեն ամրագրվել: 8-ից ավել տարեկան ծրագրերից և ոչ մեկի կատարման արդյունքում ոչ միայն թմրամիջոցներ գործածող անձանց խարանոդ եզրույթները փոխելու և դրանք միջազգային փաստաթղթերի դրույթներին համապատասխանեցնելու առաջարկություն չի ներկայացվել, այլև ծրագրի վերնագրում օգտագործվում է խտրական «թմրամոլություն» եզրույթը: Նման մոտեցումը հանգեցնում է թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ խտրական և խարանոդ շարունակական վերաբերմունքի արմատացմանը:

Այս խնդրին ՀԶԱ Վանաձորի գրասենյակն անդրադարձել է դեռևս 2016 թ. «Թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ իրականացվող քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում: Հիմնական թերությունների վերհանումը և բարեփոխումների անհրաժեշտությունը» ուսումնասիրությունում⁵⁸: Ուսումնասիրությունում ներկայացվել են ինչպես խարանոդ եզրույթները փոխարինելու, այնպես էլ առհասարակ ոլորտը կարգավորող իրավական դաշտի բարեփոխման և թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ՝ մարդու իրավունքների և միջազգային լավագույն փորձի վրա հիմնված վերաբերմունքի ձևավորմանն ուղղությամբ առաջարկություններ:

Ինչ վերաբերում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին, ապա ՀՀ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացրել է, որ

⁵⁸ Տե՛ս «Թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ իրականացվող քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում: Հիմնական թերությունների վերհանումը և բարեփոխումների անհրաժեշտությունը», 2015 թ., Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://archive.hcav.am/wp-content/uploads/2016/02/2եկոկլգ-ԹՄՐԱՄԻԶՈՑՆԵՐ-17.02.2016.pdf>

կատարել են մի շարք իրավական ակտերի վերլուծություն և 2020 թ. ընթացքում մշակվել են առաջարկություններ՝ ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել ավելի մեղմ պատժաչափեր հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների մաքսանենգության համար, քան թմրամիջոցների մաքսանենգության համար: Առաջարկությունը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պարունակությամբ դեղորայքները մաքսանենգ ճանապարհով տեղափոխում են հիմնականում առողջական խնդիրներ ունեցող անձանց համար նրանց ազգականները, ովքեր դեղորայքը ձեռք են բերում օրինական կարգով⁵⁹: Ըստ մշակողների՝ նախագիծը կնպաստի ստվերային տնտեսության աճի և բնակչության առողջության սպառնալիքների կանխմանը:

Այսինքն, առկա է բուժման նպատակով հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կարիք, որը լուծում չի ստանում: Չի առաջարկվում սահմանել պարտավորություն՝ ապահովելու անհրաժեշտ դեղերի հասանելիությունը, որի դեպքում հնարավոր կլինի կանխել ստվերային տնտեսության աճն ու բնակչության առողջության սպառնալիքները:

Անհասկանալի է, թե օրենսդրական բարեփոխումներին ուղղված այս բաժնում ինչու է ներառվել «Տարվա ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքների հիման վրա ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարին վերաբերող դիդակտիկ նյութերի և դրանց կից նկարագրական գեկույցների նախապատրաստում» միջոցառումը: Դրանք պարզապես ամփոփ ներկայացնում են կատարված աշխատանքները: Ավելին, տվյալ միջոցառման կատարողները՝ ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միջոցառման կատարմանը չեն մասնակցել և կազմակերպությանը տեղեկություններ դրա վերաբերյալ չեն տրամադրել: Կատարողներից ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2017 թ. գեկույցներ կազմել և ներկայացրել է միջազգային հարթակում, սակայն դրանք չեն պահպանվել, իսկ 2020 թ. գեկույցներ չի պատրաստել՝ համավարակով պայմանավորված «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը» խորագրով օտարերկրյա գործընկեր ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ նախատեսված հանդիպումներն անորոշ ժամանակով հետաձգվելու պատճառով: Ենթադրյալ, որ, ըստ ծրագրի ժամանակացույցի, այդ նյութերը պետք է պատրաստվեին և ներկայացվեին 2020 թ. փետրվարին, երբ հանրապետությունում պատկան մարմինները և

⁵⁹ Տե՛ս ՀՀ օրենքի նախագիծը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», քննարկել է 16.03.2020 - 01.04.2020 թթ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2373/justification>

բարձրաստիճան պաշտոնյաները հերքում էին կորոնավիրուսի վտանգը և, ըստ այդմ, այն չպետք է անդրադառնար աշխատանքային բնականոն ընթացքի վրա:

3.5.2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օպերատիվ կանխարգելիչ և հատուկ միջոցառումների անցկացում

Համաձայն տրամադրած տեղեկության՝ ՀՀ ոստիկանությունը համագործակցում է Ինտերպոլի, ՄԱԿ-ի թմրամիջոցների վերահսկման միջազգային կոմիտեի, Եվրոպայի խորհրդի միջկառավարական մարմնի՝ Պոմպիդու խմբի հետ, պարբերական հանդիպումներ են կազմակերպվում ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, թմրամիջոցների ու թմրամոլության մոնիթորինգի եվրոպական կենտրոնի և այլ միջազգային կազմակերպությունների և երկրների ներկայացուցիչների հետ: ՀԱԴԿ անդամ պետությունների հետ ամեն տարի Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ազգային անվտանգության, պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչները մասնակցում են «Կանալ» տարածաշրջանային օպերատիվ-կանխարգելիչ համալիր միջոցառմանը: Ամեն տարի հազեցվում են կինոլոգիական կենտրոնները, ձեռք են բերվում և վարժեցվում են ծառայողական շներ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացրել է, որ արձանագրվում է մաքսային իրավախախտումների հայտնաբերման կայուն աճ: Մասնավորապես՝ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցները 2018 թ. հայտնաբերել են 176 իրավախախտում, իսկ 2019 թ. այս ցուցանիշը հասել է 202-ի, ինչը, ըստ կատարողի, հանդիսանում է լավագույն ցուցանիշը վերջին 10 տարիների ընթացքում: Այսինքն, հայտնաբերման ցուցանիշն աճել է 14.7 տոկոսով (26 դեպքով):

Միևնույն ժամանակ, ինչպես արձանագրված է տարեկան ծրագրերում, շարունակում է բարձր մնալ թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների լատենտայնությունը և հանցավորության ամբողջական պատկերը չի արտացոլվում գրանցված հանցագործությունների քանակական ցուցանիշներում⁶⁰: Բացի դրանից՝ համաձայն ՀՀ ոստիկանության կայքէջում հրապարակվող Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի վիճակի մասին ամենամյա ամփոփ տեղեկատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքի այդ տարիներին գործող խմբագրության 267.1 հոդվածի հատկանիշներով /Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց

⁶⁰ Տե՛ս ծանոթագրություն 53

արեկուրսորների մաքսանենգությունը/ հանցագործությունները գրանցել են 43 տոկոս աճ⁶¹:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացրել է, որ նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, արձանագրվել է թմրաշրջանառության մեթոդների ու ձևերի փոփոխություն, մասնավորապես՝ սոցիալական ցանցերի և բջջային հավելվածների միջոցով, հայկական և արտասահմանյան վճարային համակարգերում գրանցված էլեկտրոնային դրամապանակների օգտագործմամբ, տարբեր վայրերում պատրաստված հատուկ թաքստոցների կիրառմամբ թմրամիջոցների վաճառքի միջադեպերի աճ, ինչը բարդացնում է հանցավոր գործունեության բացահայտման աշխատանքները:

Կարող ենք եզրահանգել, որ կա՛մ նախատեսված միջոցառումներն արդյունավետ չեն՝ ամրագրված նպատակին հասնելու համար, կա՛մ դրանք պատշաճ չեն իրականացվում:

Չինծառայողների շրջանում թմրամոլության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ ՊՆ ռազմա-կան ոստիկանությունն իրականացնում է տարաբնույթ կանխարգելիչ միջոցառումներ (զինծառայողների հետ պրո-ֆիլակտիկ բացատրական աշխատանքներ թմրամիջոցների գործածման վնասակարության և դրանցից բխող բացասական հետևանքների վերաբերյալ, զորամասերում, դրանց հարակից տարածքներում հայտնաբերվում և ոչնչացվում են «կանեֆ» տեսակի խոտաբույսեր, հսկողություն է իրականացվում ազատ արձակումներից և արձակուրդներից վերադարձող ժամկետային զինծառայողների նկատմամբ և այլն):

Այնուամենայնիվ կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը որևէ կերպ չի գնահատվում՝ գնահատման համակարգի և տարեկան ծրագրով նման պահանջի բացակայության հիմնավորմամբ: Այսինքն պարզ չէ, թե իրականացված իրազեկման, թմրամիջոցների և թմրամիջոց գործածող անձանց հայտնաբերման աշխատանքներն արդյոք հանգեցրել են միջոցառման սպասված արդյունքին, ինչքանով է կանխարգելվել զինծառայողների շրջանում թմրամիջոցների գործածումը:

Նշենք, որ իրավապահ մարմինների ձեռնարկած կանխարգելիչ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում զորամասերում 2016 թ. հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության և գործածման 33 դեպք 55 զինծառայողի մասնակցությամբ: Դեպքերից 17-ով հարուցվել են քրեական գործեր, իսկ 16 դեպքով քրեական գործի հարուցումը

⁶¹ Տե՛ս ՀՀ ոստիկանության կայքէջ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.police.am/fight-against-drug-trafficking/statistics1.html>

մերժվել է՝ հանցա-կազմի, ինչպես նաև հանցագործության դեպքի բացակայության հիմքով: 2020 թ. ընթացքում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է թմրամիջոցների ապօրինի պահման և գործածման 42 դեպք 80 զինծառայողի մասնակցությամբ: Դեպքերից 20-ով հարուցվել են քրեական գործեր, իսկ 22-ով մերժվել է քրեական գործ հարուցելը՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Կարող ենք եզրահանգել, որ աճում է հանցագործությունների թիվը, հանցագործություններում ներգրավված անձանց թիվը, ինչը կա՛մ կանխարգելիչ միջոցառումների անարդյունավետության, կա՛մ դրանց ոչ պատշաճ իրականացման հետևանք է:

2016 թ. տարեկան ծրագրով նախատեսված էր զորակոչերի ժամանակ համապատասխան բժիշկ-մասնագետների ներգրավում բժշկական հանձնաժողովներում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ այդ տարի միջոցառումը չի կատարվել, այսինքն զորակոչերի ժամանակ համապատասխան բժիշկ-մասնագետներ բժշկական հանձնաժողովներում չեն ներգրավվել: Մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից տրամադրվել է տեղեկատվություն, որ զինվորական կոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված են հոգեբույժ մասնագետներ/համապատասխան բժիշկ-մասնագետներ, ովքեր իրականացնում են նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների նարկոլոգիական հետազոտումը ու անհրաժեշտության դեպքում ուղեգրում ստացիոնար հետազոտության համար:

Սույն միջոցառումը ընդգրկվել է նաև Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2017 թ. միջոցառումների ծրագրում, իսկ 2017 թ. սեպտեմբերի 14-ի ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 38 արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումը, որով այն ուժը կորցրած է ճանաչվել: Նման որոշումը հիմնավորվել է հետևյալով. «ՀՀ առողջապահության նախարարության հետ խնդրի քննարկման արդյունքներով պարզ է դարձել, որ յուրաքանչյուր զորակոչի շրջանակներում զորակոչիկների նարկոլոգիական (թունաքիմիական) հետազոտությունների համար կպահանջվի զգալի ֆինանսական ծախսեր (մեկ զորակոչիկի հետազոտության արժեքը՝ 15.000 դրամ), իսկ առանց նման հետազոտությունների կատարման՝ բժշկական հանձնաժողովներում համապատասխան մասնագետների ընդգրկումը կդառնա անիմաստ:

3.5.3. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում

Երեխաների հետ աշխատող հոգեբանները և Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի մասնագետները փաստում են, որ տարեց տարի աճում է թմրամիջոց գործածող դեռահասների թիվը, իսկ թմրամիջոցների տեսակներն ավելի վտանգավոր են դառնում⁶²: Դեռահասների մոտ կախվածություն առաջացնելու համար օգտագործվում են ավելի հևարամիտ միջոցներ (օր՝ ժելեատիպ կոնֆետների ձևով թմրամիջոցներ են հյուրասիրում կամ զովացուցիչ ըմպելիքներում թմրամիջոց ավելացնում): Կախվածություն առաջացնելով՝ գումարի կամ թմրամիջոցի դիմաց դեռահասներին ներգրավում են թմրամիջոցների վաճառքին: Ընդ որում խոցելի են ինչպես առանց ծնողական խնամքի մնացած, այնպես էլ բարեկեցիկ ընտանիքների երեխաները:

Համաձայն միջոցառման պատասխանատու մարմնի տրամադրած տեղեկության՝ հանրության իրազեկման նպատակով պատրաստվել են նյութեր, որոնք հրապարակվել են գերատեսչությունների (գլխավորապես Ոստիկանության) պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև հեռարձակվել են Հ1, Շանթ ԹՎ, Արարատ ԹՎ, Ար ԹՎ, Երկիր Մեդիա, Կենտրոն ԹՎ հեռուստատալիքներով:

Երեխաների և դեռահասների իրազեկման նպատակով, ըստ Ոստիկանության տրամադրած տեղեկատվության, մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներում սովորողների, ուսուցիչների և ծնողների շրջանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցներից կախվածության դեմ պայքարի թեմաներով նախապատրաստվել են գեկույցներ և անց են կացվել հեռավար սեմինարներ, կարդացվել են դասախոսություններ:

Նշենք, որ ՀՀ ոստիկանության ներկայացրած հաղորդումների, տեսանյութերի, տեղեկատվությունների զգալի մասն իրազեկում է ոչ թե թմրամիջոցների գործածման բացասական հետևանքների մասին, այլ թմրամիջոցների պահման, գործածման, իրացման դեպքերի բացահայտվելու դեպքում պատժողական հետևանքների մասին՝ այդ թվում ներկայացնելով անձնական տվյալներ: Մինևույն ժամանակ ներկայացված հատուկ հաղորդումները, թեմատիկ ֆիլմերը, տեսահոլովակները որպես այդպիսին չեն պատրաստվել լրատվամիջոցների հետ համատեղ: Ինչպես նշվում է Ոստիկանության գրության մեջ «*Նշված բոլոր տեսանյութերի գերակշիռ մասը նույնությամբ կամ սեփական մեկնաբանություններով տեղ են գտել*

⁶² Տե՛ս Արմենիա հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդումը, 22.10.2022 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.facebook.com/watch/?v=5594020913967235>

հանրապետության հեռուստա և ռադիո ընկերությունների լրատվական ծրագրերում, տպագիր մամուլի էջերում և էլեկտրոնային կայքերում»:

Կարող ենք եզրակացնել, որ իրազեկման հիմնական շեշտը կրկին ապօրինի թմրամիջոցներ գործածելու դեպքում պատասխանատվության ենթարկելու վրա է, տեսանյութերը հայտնաբերված հանցագործությունների մասին են: Իրազեկման միջոցառումների առաջին կատարողը ՀՀ ոստիկանությունն է, ոչ թե ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, որի պարտականությունն է ուսումնական հաստատություններում իրազեկման իրականացումը:

Ավելին, ինչպես փաստում են ՁԼՄ մշտադիտարկման արդյունքները, գերակշռող են (87 տոկոսը) օրենքով արգելված արարքների կատարման համար անձի նկատմամբ իրականացվող պատժողական բնույթի գործողությունների վերաբերյալ հրապարակումները⁶³: Այսինքն, բնակչությունն իրազեկվում է ոչ թե թմրամիջոցների վնասի, ինչը գործողության նպատակն է, այլ այդպիսիք գործածելը/շրջանառելը հայտնաբերելու դեպքում պատժի մասին:

Ինչ վերաբերում է թմրամիջոց գործածող անձանց խնդիրների մասին բարձրաձայնող և թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ առկա կարծրատիպերի նվազեցմանը միտված հրապարակումներին, ապա դրանք կազմում են 2017-2019 թթ. հավաքագրված 4177 հրապարակումների 0,3 տոկոսը (11 հրապարակում 3 տարվա ընթացքում):

Ըստ այդմ, թե՛ թմրամիջոց գործածող անձանց թվի աճը, թե՛ հրապարակումների բնույթը վկայում են նշյալ միջոցառման ոչ արդյունավետ ու ոչ թիրախային իրականացման մասին:

Հաշվի առնելով, որ թմրամիջոցների կանխարգելման հիմնական թիրախ խումբը դեռահասներն են, ինչպես նաև այն փաստը, որ նրանց մեծամասնությունը հեռուստացույց չի դիտում և չի հետևում զանգվածային լրատվության միջոցներին, անհրաժեշտ է մշակել և ներդնել այլընտրանքային, թիրախ խմբին հասանելի իրազեկման մեխանիզմներ: Բացի դրանից՝ իրազեկման գլխավոր կատարողն ու պատասխանատուն, հաստկապես դպրոցահասակ երեխաների շրջանում, պետք է լինի ոչ թե ՀՀ ոստիկանությունը, այլ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Երեխաներին ու դեռահասներին իրազեկումը պետք է նպատակ ունենա կանխելու թմրամիջոց գործածելը, ոչ թե իրազեկելու, թե գործածելու դեպքում ինչ պատիժ է նախատեսվում:

⁶³ Տե՛ս ծանոթագրություն 1

3.5.4. Թմրամուլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ոլորտի ծառայողների մասնագիտական գիտելիքների կատարելագործում, միջազգային համագործակցության զարգացում

Կատարող գերատեսչությունները ներկայացրել են տվյալներ իրենց ծառայողների կողմից մասնակցած միջոցառումների, սեմինարների և քննարկումների վերաբերյալ՝ թվելով մասնակցության օրը, վայրը և կազմակերպչին:

Այնուամենայնիվ, թե՛ միջոցառումը և թե՛ դրա շրջանակում կատարված գործողությունները որևէ արդյունքային ցուցանիշ չեն ներկայացնում: Անհասկանալի է, թե քանի ծառայող է մասնակցել վերապատրաստմանը, միջազգային որ փորձն է ներդրվել Հայաստանում, որ ոլորտում, ինչ արդյունքներ են գրանցվել ներդրմամբ, նյութատեխնիկական վերազինումն ինչպես է նպաստել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին, փորձագիտական և աշխատանքային խմբերում ներգրավվածությունն ինչպես է նպաստել պայքարի արդյունավետության բարձրացմանը: Նպատակներ, որոնց ուղղված պետք է լինեն գործողությունները, սակայն որոնց մասին որևէ տեղեկություն չի ներկայացվում:

3.5.5. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց վերականգնողական միջոցառումներ

Սույն բաժնի շրջանակում 2014 թ.-ից նախատեսվում է թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում: Բացառությունը 2018 թ. էր, երբ միջոցառումը ձևակերպվել էր որպես թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական ծառայությունների քարտեզագրում և պատվիրակման միջոցով դրանց ներդրման հնարավորության դիտարկում:

Դատելով փաստից, որ միջոցառումը նույն ձևակերպմամբ տարեց տարի փոխանցվում է, կարող ենք եզրակացնել, որ 9 տարվա ընթացքում կարիքն այդպես էլ չի գնահատվել և առաջարկություններ չեն մշակվել: Անհայտ է նաև՝ 2018 թ.-ի ծրագրի միջոցառման արդյունքն ապահովվել է, թե ոչ, քանի որ կազմակերպության հարցմանը պատասխանատու գերատեսչությունները չեն պատասխանել: Հիմք ընդունելով փաստը, որ միջոցառումը 2018 թ.-ից հետո ևս 5 տարի ներառվում է տարեկան ծրագրում, կարող ենք եզրակացնել, որ ծառայությունների քարտեզագրում ևս չի իրականացվել:

Հատկանշական է, որ սույն միջոցառման կատարող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկություններ է տրամադրել կազմակերպության հարցմանը մինչև 2018 թ.-ը, իսկ դրանից հետո պատասխանել է, որ միջոցառումն իր իրավասությունից դուրս է: Նման պատասխանն անհասկանալի ու մտահոգիչ է, քանի որ թմրամիջոցների գործածումը դադարեցրած անձանց կարիքների գնահատումը և համապատասխան ծառայությունների քարտեզագրումը նշյալ նախարարության անմիջական պատասխանատվության ներքո են:

Ինչ վերաբերում է մինչև 2018 թ.-ը տրամադրած տեղեկությանը, ապա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն առաջարկություն է ներկայացրել վերականգնողական համապատասխան կենտրոնի ստեղծման վերաբերյալ, որը մինչ օրս չի ստեղծվել: Մինևս ժամանակ հարկ է նշել, որ տրամադրված տեղեկատվությունից պարզ չէ, թե արդյոք իրականացվել է համապարփակ ուսումնասիրություն կարիքի վերհանման նպատակով:

Մինչև 2018 թ.-ը տասը մարզպետարաններից միայն ՀՀ Արագածոտնի և Սյունիքի մարզպետարաններն են հայտնել թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց համար վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների խնդիրների ուսումնասիրության մասին: ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, սակայն, առաջարկություններ չի ներկայացրել: Իսկ ՀՀ Սյունիքի մարզպետարանի իրականացրած ուսումնասիրության արդյունքում Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում ստեղծվել է փայտամշակման-կահույքագործության արհեստանոց, իրականացվել են փոքր գյուղատնտեսական ծրագրեր, ներդրվել սպորտային և երաժշտական թերապիաներ, որոնց աշխատանքներին մասնակցել են նաև թմրամիջոցների գործածումը դադարեցրած անձինք: Այնուհանդերձ պարզ չէ, թե արդյոք կատարված այս աշխատանքներից զատ այլ առաջարկություններ եղել են ուսումնասիրության արդյունքում և ինչ չափով են այս աշխատանքները լուծում ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրները: 2018 թ.-ից հետո, ըստ տրամադրված տեղեկությունների, առհասարակ կարիքի գնահատում որևէ մարզում չի կատարվել:

Ռեմիսիայի շրջանում գտնվող կամ բուժման կուրսը հաջողությամբ ավարտած որևէ անձ պետական զբաղվածության կարգավորման ծրագրերում չի ընդգրկվել: Մինևս ժամանակ հարկ է նշել, որ տարվել են որոշակի աշխատանքներ զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկելու համար:

«Թմրամոլության հակում ունեցող» անձանց սոցիալական կարիքների գնահատում, որի հիման վրա պետք է սոցիալական ծառայությունների փաթեթ տրամադրվեր, չի իրականացվել:

3.5.6. Անչափահասների և երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի միջոցառումներ

Ինչպես տեղեկացնում են պատասխանատուները, իրազեկման միջոցառումներ են իրականացվել, կառուցվել են պարզ տիպի խաղահրապարակներ:

Այնուամենայնիվ միջոցառմամբ սահմանված չէ, թե պարզ տիպի քանի խաղահրապարակներ և որ համայնքներում պետք է ստեղծվեին, ստեղծվածներից քանիսն են արդեն ենթակա վերանորոգման: Հայտնի չէ նաև, թե արդյոք, իրականացվել է այս միջոցառման արդյունավետության գնահատում. արդյոք այդ խաղահրապարակները նպաստել են դեռահասների շրջանում թմրամիջոցների գործածման նվազմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետության՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցավորության նվազեցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ուղղված գործողությունները կա՛մ պատշաճ չեն կատարվում, կա՛մ արդյունավետ չեն:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման ուղղությամբ մշակվում են փաստաթղթեր, կատարվում աշխատանքներ, այնուամենայնիվ դրանք չեն արտացոլում ներկա իրավիճակն ու մարտահրավերները: Այդպիսով, դրանք արդյունավետ չեն, իսկ խնդրի առողջապահական և սոցիալական բաղադրիչներն առհասարակ պատշաճ ուշադրության չեն արժանանում: Ըստ այդմ, անհրաժեշտ է վերանայել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կարգավորող իրավական դաշտը և քաղաքականությունը՝ համապատասխանեցնելով դրանք արդի մոտեցումներին և միջազգային չափանիշներին:

Հուսադրող չէ նաև նոր ռազմավարությունը: Այն խնդրահարույց է խտրական եզրույթների կիրառմամբ: Բացի դրանից՝ ինչպես նշում են ոլորտում աշխատող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, քաղաքականությունների մշակումը մասնակցային չէ, քաղաքացիական հասարակությունը որևէ ձևաչափով ներգրավված չէ այդ գործընթացում⁶⁴:

Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել ոլորտը կարգավորող նոր ռազմավարություն, որը կլինի մասնակցային, կունենա ժամկետներ, տեսլական,

⁶⁴ Տե՛ս Կախվածությունների բուժման ազգային կենտրոն, հաղորդում, 02.03.2023 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.facebook.com/watch/?v=527429976203897>

իրավունքահեն մոտեցում, սոցիալական բաղադրիչ, մշտադիտարկման և գնահատման գործուն մեխանիզմ:

> ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնահատում

Ռազմավարության մշակումն անհրաժեշտ է սկսել իրավիճակի ճշգրիտ գնահատումից, խնդրի պատճառների բացահայտումից, իրականացված քաղաքականության գնահատումից ու բացթողումների վերլուծությունից:

Արդյունավետ քաղաքականության կարևոր նախապայմանը պարբերաբար թարմացվող հետազոտություններն են առավել տարածված թմրամիջոցների, թմրամիջոց գործածողների տարիքային և սեռային կառուցվածքի, սոցիալական կարգավիճակի, կրթության, թմրամիջոցների շրջանառության աղբյուրների, գործածման պատճառների և առկա միտումների մասին:

Առողջապահության ազգային ինստիտուտի համաձայն՝ Հայաստանում ապօրինի թմրամիջոցների գործածման մասին համաճարակաբանական և վիճակագրական տվյալները մնում են խիստ աղքատիկ, քանի դեռ թմրամիջոցների վերաբերյալ հետազոտությունների ակտիվությունն անբավարար է, իսկ առկա տվյալներն էլ արտացոլում են միայն իրավիճակի որոշակի, այլ ոչ թե համընդհանուր պատկերը⁶⁵: Ավելին, համաձայն Հայաստանի Հանրապետության թմրամիջոցների վերաբերյալ ազգային զեկուլյցների՝

- Ազգաբնակչության շրջանում թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի տարածվածության վերջին հետազոտությունն իրականացվել է **2005 թ.**
- ՀՀ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների գործածման տարածվածության վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է **2003 թ.**
- «Դպրոցներում ալկոհոլի և թմրամիջոցների վերաբերյալ եվրոպական հետազոտության» փորձնական ծրագիր իրականացվել է **2005 թ.** Սյունիքի մարզում

⁶⁵ Տե՛ս Գերդոգավորման դեպքերի կանխարգելման մեթոդիկայի վերաբերյալ զեկուլյց, էջ 4, 2020 թ., ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://nih.am/assets/pdf/atvk/7a6418220cd2ebaca0072b542bb65b72.pdf>

- Դեռահասների շրջանում ապօրինի թմրամիջոցների գործածման վերաբերյալ ամենավերջին ընդգրկուն հետազոտությունն իրականացվել է **2007 թ.**⁶⁶:

15-19 տարի առաջ իրականացված հետազոտությունները չեն կարող լինել այն հենքը, որի վրա կարող է հիմնվել թմրամիջոցների ոլորտում արդյունավետ քաղաքականությունը:

Ժամկետներ

Հաշվի առնելով, որ իրավիճակն արագ ու անընդհատ փոփոխվում է, իսկ նոր առաջացող մարտահրավերները թելադրում են նոր առաջնահերթություններ, անհրաժեշտ է ռազմավարությունները մշակել որոշակի ժամկետայնությամբ: Որպես կանոն, դրանք մշակվում են 4-6 տարվա համար: Այնուհետև ռազմավարության հիման վրա մշակվում է գործողությունների ծրագիր: Որպես ուղենիշ կարելի է հիմք ընդունել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագրերի մոդելը:

Կառուցվածք

Ռազմավարությունում բացի վիճակագրական տվյալներից անհրաժեշտ է ներառել երկրում իրավիճակի վերլուծությունը (պատերազմ, համավարակ), ոլորտի առաջնահերթությունները, խնդիրները, մարտահրավերները, միջազգային կառույցների դիրքորոշումները, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմ:

Միջոցառումների ծրագրերում միջոցառումները պետք է լինեն փաստերի վրա հիմնված, գիտականորեն հիմնավորված, հստակ ձևակերպված, դրանց ակնկալվող արդյունքն ու ազդեցությունը՝ չափելի ու գնահատելի:

Մասնակցայնություն

Նոր ռազմավարությունը պետք է մշակվի քաղաքացիական հասակարության հետ խորհրդատվությունների և առաջնահերթությունների սահմանման թափանցիկ գործընթացում:

Առաջնահերթությունները սահմանելիս պետք է հաշվի առնել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային սկզբունքները, միջազգային կազմակերպությունների՝ մասնավորապես ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների առաջարկությունները:

⁶⁶ Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության թմրամիջոցների վերաբերյալ ազգային զեկույց, Էջեր 22 և 34-35, 2021 թ., ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://nih.am/assets/pdf/atvk/69d9f2e85e75cd9d78d902d86ff28250.pdf>

Անհրաժեշտ է նաև ներդնել կատարողների հաշվետվողականության թափանցիկ և հանրության համար մատչելի ու հասանելի մեխանիզմներ:

Յամաչափություն

Պետք է երաշխավորել ռազմավարության կատարման պատասխանատուների համաչափ ներգրավվածություն՝ առաջնահերթություն տալով թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական և սոցիալական վերաինտեգրման ծառայությունների ապահովմանը: